ՃԼԹ.

Էջմիածնի Ղազար Ջահկեցի կաթուղիկոսին խնդիրը ամենալուրջ հանգամանքի մը տակ կը ներկայանայ մեր այս վաւերաթուղթին մէջ, ուր կը հանդիպինք այնպիսի կարևորագոյն ծանօթութիւններու՝ որոնց մասին կը լռեն Զամչեան և ուրիշներ։ Արդ, լոկ դրամի և ուրիշ չարաշահութեանց տեսակէտը չէ որ Ղազարու դէմ մեծ հակառակութիւն ստեղծած է, այլ անկէ ժայթքած կարգ մը մոլորութիւններ, որոնք շատ աւելի ստիպողական դարձուցած են որ ժամ առաջ կորսնցնէ իր գրաւած դիրքը ու մեկնի Էջմիածնայ վանքէն։ Այս ամէնը խնամքով կը տեղեկագրէ Հ. Միք. վարդապետ, հաղորդելով միանգամայն՝ թէ այդ տխուր վիճակը ի՛նչ հետևանք ունեցած է և ի՛նչ արձագանգ գտած է ի Կ. Պոլիս։

Գերյարգելոյ Արբայ Հօրդ մերոյ, տեառն տեառն Միխիթարայ
Աստուածապարգևուրեան վարդապետի

... Յետ այսորիկ գիտելի է վասն արևելեան կողմանէ։ Որ ի Էջմիածին եղեալ եպիսկոպոսունք և վարդապետք, ժողովով զղազար կաթուղիկոսն բանադրեալ և նզովեալ են, և անընդունակ արարեալ, ով ոք որ ընդունի զնա և կաթուղիկոս անուանէ, և այն նզովեալ եղիցի։ Եղեալ ի վերայ նորա զայսոսիկ ամբաստանութիւնս, թէ ուրանայ զոլ երրորդութիւն անձանց. մարդադաւան է առ քրիստոս. ո՛չ ընդունի զաստուածածին զոլ կոյս։ Սուրբք ոչ զոն ասէ, եթէ զոն, ահա մինն եմ և ես։ Եւ սաղմոսն դաւդայ ոչ պարտ է ասիլ ի ժամերգութեան, այլ զոմանս աղօթս յիւրմէ շարադրեալ, զայնս յառաջադրէ ասել. և զայլս ոմանս ամբաստանութիւնս, զայս բանք գրեալ առ էրզրումայ առաջնորդն, քիւթիւռ կոչեցեալ, և նա ի յեկեղեցւոջն ընթերցեալ, որ նաև ահաքինն անդ ի յիւր վանքն է. զսոսա կոչեալ են լինել կաթուղիկոս, որն և իցէ, բայց չեն կամեցեալք սոքա։ Կաթուղիկոսն լեալ իցէ անդ. անտի գնացեալ ի պայազիտ ի վանքն թաթէոս առաքելոյն նստեալ. և ասեն թէ նստեալ շահն, որ սպան զթահմազն, կոչեալ է զղազար կաթուղիկոսն առ ինքն։ Եւս ժողովն այն ասացեալ է ի յայն բանադրանաց գրին մէջ, թէ ոչ կոչեսցի կաթուղիկոս, այլ զայթակղոս։ Զայսոսիկ բանքս քերօբէ Վ. օրինակեալ է և ուղարկեալ աստ առ էրզրումցի Յոհաննէս Վ.։ Զայս բանադրանաց գիրս աստ ևս ուղարկեալ են ի Էջմիածնայ առ փաթրիք և առ իշխան սառաֆունս։ Աստ ևս փաթրիքն իւր համախոհ վարդապետօք, քահանայիւք և սառաֆ իշխանօք բանադրեցին և հրատարակեցին յամենայն եկեղեցիս կոնտակօք։ Արևելեան վարդապետք խնդրեն զմինն յերիցս երթալ լինիլ կաթուղիկոս, այսինքն, կամ Գրիգոր Վ. Երուսաղէմայ, կամ այս պատրիարքս, և կամ իզմիրու առաջնորդ աղէկսանդր Վ. զոր և կոչեցին, որ աստ է. կարծեմ թէ զսա ուղարկեն, որ և է ստամպօլցի։...

Մնամ պատրաստական ծառայ ամենայնի
Հայր Միքայէլ Վ.

Ցամի տեառն 1746ին
Նոյեմբերի 25ին չուէ գիրս։
[Կ. Պոլիս]

ՃԽ.

Կը շարունակուին Ղազարու կաթողիկոսութեան աղետալի դրուագները։ Բռնի ուժի զօրութեամբ նա կրկին գահ կը բարձրանայ, ինչպէս վերը նշանակած ենք։

Թէև մեր վաւերագրին ակնարկներն համառօտ են հոս, սակայն նոյն նամակագիրը իր մէկ ուրիշ անտիպ թուղթին մէջ կը գրէ հետևեալ եղերերգական դէպքերն ալ. «Եւ ևս յայսոսիկ յաւուրս լուայ, թէ զղազար կաթուղիկոսն ի գահ իւր հաս-